

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**«Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում ՇՊՀ-ում նախատեսված «Կայուն տուրիզմի զարգացում և մարզամշակութային միջոցառումների կազմակերպում ու անցկացում» դասընթացի անցկացման սեմինարավարի խորհրդատվական ծառայությունների տրամադրման անհատ-խորհրդատուի մրցույթ**

02 մայիսի 2018թ.

Ծրագրի անվանումը. «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի նպատակն է տարածաշրջանային մարտահրավերներին և աշխատաշուկայի պահանջներին ու հեռանկարներին համահունչ դասընթացների, ծառայությունների և կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով Շիրակի պետական համալսարանի /ՇՊՀ/ հզորացումը՝ ուղղված Շիրակի մարզի համաչափ զարգացմանը:

*Շիրակի պետական համալսարանը հայտարարում է «Կայուն տուրիզմի զարգացում և մարզամշակութային միջոցառումների կազմակերպում ու անցկացում» դասընթացի անցկացման սեմինարավարի խորհրդատվական ծառայությունների տրամադրման անհատ-խորհրդատուի ընտրության մրցույթ:*

Անհատ-խորհրդատուի աշխատանքի նկարագրի, գործունեության շրջանակի, պահանջվող որակավորման, փորձի, ինչպես նաև գնահատման չափանիշների նկատմամբ ներկայացվող պահանջներն են՝

30 շահառուի համար կազմակերպվող և անցկացվող 64 ժամ տևողությամբ դասընթացի վարման համար՝

- ✓ Ուսումնասիրել համանման դասընթացների դասավանդման տեղական և միջազգային փորձը,
- ծրագրի ղեկավարի և համակարգողի հետ քննարկել և հաստատել դասընթացի մասնակիցների վերջնական ցուցակը, ապահովել իրազեկությունը սեմինարի անցկացման վայրի, ժամի մասին,
- իրականացնել «Կայուն տուրիզմի զարգացում ու մարզամշակութային միջոցառումների կազմակերպում և անցկացում» դասընթացի վարում՝ առաջնորդվելով «Կայուն տուրիզմի զարգացում ու մարզամշակութային միջոցառումների կազմակերպում և անցկացում» դասընթացի հայեցակարգային դրույթներով,
- դասընթացի ավարտին համակարգել ստացված գիտելիքները գործնականում կիրառելու գործընթացը («Follow up»-ը),
- իրականացնել ընթացիկ և ամփոփիչ ստուգումներ, գնահատումներ:

**. Խորհրդատուի որակավորման նվազագույն պահանջները և գնահատման չափանիշները.**

№	Անվանումը	Պահանջը	Միավորը
1.	Որակավորում	✓ Համապատասխան ոլորտում մագիստրոս և/կամ դիպլոմավորված մասնագետ:	20
2.	Ընդհանուր աշխատանքային փորձ	<p>✓ տեսական, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ վարելու աշխատանքային փորձ /ՇՊՀ-ում աշխատանքային փորձը կհամարվի առավելություն/,</p> <p>✓ անհատական և թիմային աշխատանքի փորձ,</p> <p>✓ գովազդի և/կամ հասարակայնության հետ կապերի վերաբերյալ դասընթացի մասնակցությունը ցանկալի է:</p>	40

3.	<b>Հատուկ աշխատանքային փորձ</b>	<ul style="list-style-type: none"> <li>✓ մասնակցություն հեռուստուցման որևէ դասընթացի, ինչպես նաև դրա ընթացիկ և ամփոփիչ ստուգումներին,</li> <li>✓ հեռուստուցման եղանակով դասավանդման առանձնահատկությունները ներկայացնող գրականության իմացություն,</li> <li>✓ զբոսաշրջության/հյուրընկալության ու մշակութային միջոցառումների կազմակերպման և անցկացման փորձը ցանկալի է,</li> <li>✓ ռուսերենի և անգլերենի բավարար իմացությունը ցանկալի է:</li> </ul>	<b>40</b>
	<b>Ընդամենը՝</b>		<b>100</b>

Խորհրդատուի աշխատանքի կատարման ժամանակահատվածը՝ 3 ամիս:

Անհատ խորհրդատուի ընտրության մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ պետք է ներկայացնեն.

- դիմում (ձևը կցվում է)
- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկով սահմանված «Անհատ խորհրդատուների ընտրության» մեթոդի:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու կամ հետաքրքրվածության հայտը ներկայացնելու համար դիմել հետևյալ հասցեով կամ էլ. փոստով. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամ (ՀՀ, ք. Գյումրի, Պարույր Սևակի 4, Բ2-12 սենյակ),  
[shirakhovhannisyan@mail.ru](mailto:shirakhovhannisyan@mail.ru), հեռախոս՝ 0312 2 84 69:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2018 թվականի մայիսի 16-ը, ժամը 17:00  
ներառյալ:

ՀՀ ԿԳՆ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան»  
հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն, ք.Գյումրի, փ.Պարույր Սևակի 4

Դիմող՝ \_\_\_\_\_

Հեռ. \_\_\_\_\_

Էլ. Փոստ \_\_\_\_\_

### Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցելու «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

անհատ-խորհրդատուի ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ պահանջվող տեղեկատվությունը:

Դիմող՝ \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ /

(ստորագրություն)

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2018 թ.